3.	ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА

«ՍԵՖ ԻՆՏԵՐՆԵՅՇՆ» ՈՒՎԿ ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՎԱՐԿԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԵՐԳՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան
e-mail: m.hergnyan@gsu.am
ՄՆԵՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի
բակալավրիատի «Ֆինանսներ» բաժնի շրջանավարտ
e-mail: syuzannamneyan5@gmail.com

Հոդվածը նվիրված է «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի վարկատեսակների տրամադրման պայմանների բարելավման ուղիների բացահայտմանը:

Շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ տնտեսությունը չի կարող զարգանալ առանց կայուն, զարգացած ֆինանսական ինստիտուտների՝ մասնավորապես վարկային համակարգի, որի զարգացումն ու կատարելագործումը պահանջում է վերանայել վարկավորման առկա պայմանները: Անշուշտ, ֆինանսական շուկայում առաջնային նախապայման է վարկային կազմակերպությունների կողմից միջոցներ ներգրավելու և դրանց տեղաբաշխումը կարգավորելու խնդիրը, որը պայմանավորված է ակտիվների և պասիվների կառավարման հստակ կանխորոշված ռազմավարությամբ: «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն համարվում է ՀՀ ֆինանսական համակարգի դերակատարներից մեկը և իր ուրույն տեղն ունի այդ համակարգում: Հետանցումային տնտեսություն ունեցող երկրներում վարկային համակարգի ձևավորումն ու դրա լիարժեք իրագործումը կապված են մի շարք խնդիրների և սահմանափակումների հետ:

Աշխատանքում ներկայացված են «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի 2017-2019թթ. ֆինանսական ցուցանիշները, իրականացվել է ՍԵՖ-ի կողմից տրամադրվող վարկերի և փոխատվությունների վերլուծություն՝ ըստ տնտեսության տարբեր ճյուղերի և հաճախորդների, առաջարկվել են վարկերի տրամադրման պայմանների բարելավման ուղիներ:

Բանալի բառեր՝ *վարկային համակարգ, ունիվերսալ վարկային կազմակերպություն, ֆինանսական կայունություն, վարկառու, վարկատու, երաշխավորությամբ ապահովված վարկեր, վարկերի տրամադրման պայմաններ, վարկային ռիսկ:*

Շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ տնտեսության զարգացման համար անհրաժեշտ են զարգացած ֆինանսական ինստիտուտներ, այդ թվում է վարկային համակարգը, որի կատարելագործումը պահանջում է վերանայել վարկավորման պայմանները: Անշուշտ, ֆինանսական շուկայում առաջնային նախապայման է վարկային կազմակերպությունների կողմից միջոցների ներգրավման և տեղաբաշխման հարցերի կարգավորումը՝ պայմանավորված ակտիվների և պասիվների կառավարման հստակ կանխորոշված ռազմավարությամբ: «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն, որպես ՀՀ ֆինանսական համակարգի դերակատարներից մեկը, իր ուրույն տեղն ունի այդ համակարգում: Հետանցումային տնտեսությամբ երկրներում, վարկային համակարգի ձևավորման հետ կապված, կան մի շարք խնդիրներ և սահմանափակումներ, որոնց գործարկմամբ են պայմանավորված անցման շրջանի առանձնահատկությունները: ՀՀ տնտեսությունը չի կարող գործնականում զարգանալ առանց կայուն վարկային համակարգի, հետևաբար պահանջվում է վերանայել վարկավորման գործող պայմանները:

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ն (ՍԵՖ) հիմնադրվել է 1997թ. «Վորլդ Վիժն» միջազգային քրիստոնեական բարեգործական կազմակերպության կողմից և միակ սեփականատերն է: ՍԵՖ-ը սոցիալապես պատասխանատու կազմակերպություն է, որի մշակած գործառնական թիրախները նպատակաուղղված են լուծելու սոցիալական խնդիրներ, ապահովելու ֆինանսական կայունություն և նվազեցնելու ռիսկերը: ՍԵՖ-ում վարկերը տրամադրվում են ընկերության կողմից մեկ փոխառուի և վարկառուի համար նախատեսված սահմանաչափի շրջանակներում, ընդ որում՝ մեկ փոխառու են համարվում միևնույն բնակության վայրում հաշվառված վարկառուները, նրանց հետ փոխկապակցված անձինք: «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ում միայն երաշխավորությամբ ապահովված վարկերի համար մեկ փոխառուի գծով կիրառվում են վարկավորման թույլատրելի առավելագույն հետևյալ սահմանաչափերը.

❖ Ընկերության մարզային (Երևանում չտեղակայված) ստորաբաժանումների համար՝ առավելագույնը հինգ վարկ, բայց ոչ ավել, քան գումարային 8 հազար ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ վարկի գումարի չափով,

❖ Ընկերության՝ Երևանում տեղակայված ստորաբաժանումների համար՝ ոչ ավել, քան 12 հազար ԱՄՆ դոլար կամ համարժեք ՀՀ դրամ վարկի գումարի չափով,

❖ Այն հայտերը, որոնց դեպքում մեկ փոխառուի գծով վարկավորման ընդհանուր գումարը (ընթացիկ վարկային մնացորդը + հայտով պահանջվող գումարը)

գերազանցում է 4 մլն ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը, անկախ գումարի չափից, պետք է հաստատվեն վարկային կենտրոնական հանձնաժողովի կողմից:

❖ Ընկերության բոլոր ստորաբաժանումների համար միայն երաշխավորությամբ ապահովված վարկերի դեպքում, միևնույն վարկատեսակի շրջանակներում վարկառուին և կամ փոխկապակցված անձին հաջորդ վարկը հնարավոր է տրամադրել միայն նախորդ վարկի տրամադրումից 40 օրացուցային օր հետո[1]:

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ն առաջարկում է հետևյալ վարկատեսակները՝

➢ **բիզնես վարկեր** կարող են ստանալ նրանք, ովքեր զբաղվում են փոքր և միջին ձեռնարկատիրությամբ և ունեն շրջանառու միջոցների ու կապիտալ ներդրումներ կատարելու կարիք,

➢ **գյուղատնտեսական վարկեր** տրամադրվում են նախատեսված փոքր և միջին գյուղացիական տնտեսությունների գործունեությունն ընդլայնելու նպատակով,

➢ **սպառողական վարկեր** տրամադրվում են այն ֆիզիկական անձանց, ովքեր սպառողական գնումների իրականացման ֆինանսավորման և ընտանեկան կարիքների համար ունեն ազատ միջոցների անհրաժեշտություն,

➢ **վերանորոգման վարկերը** բնակարանի վերանորոգման, վերակառուցման, կենցաղային պայմանների բարելավման նպատակով տրամադրվող վարկերն են:

Ընկերության կողմից տրամադրվող վարկային ծառայությունները հարստացվել են մի շարք նոր վարկային «պրոդուկտներով» և դրանց ենթատեսակներով, սահմանվել են որոշակի արտոնություններ, որոնք հնարավորություն են ընձեռնում հաճախորդներին՝ հաճախակի օգտվելու բանկի վարկային ծառայություններից՝ անուղղակիորեն խթանելով տնտեսության իրական հատվածի զարգացմանը:

ՍԵՖ-ի 2017-2019թթ. ֆինանսական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 1.1-ում:

Աղյուսակ 1.1

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի ֆինանսական ցուցանիշները 2017-2019 թթ.

Հիմնական ֆինանսական ցուցանիշներ	Տարիներ			Փոփոխություն (2017-2018)		Փոփոխություն (2019-2018)	
	2017	2018	2019	հազ.դրամ	%	հազ.դրամ	%
Ա	1	2	3	4	5	6	7
Ակտիվներ	13,583,718	13,463,911	15,371,778	119,807	(0.88)	1,907,867	14.2
Այդ թվում՝ տրված վարկեր	10,942,282	11,087,784	12,830,545	145,502	1.3	1,742,761	15.7
Պարտավորություններ	11,257,172	11,074,559	13,060,958	(182,613)	(1.6)	1,986,399	17.9

[1] «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ կանոնադրություն:

Սեփական կապիտալ	2,326,546	2,389,352	2,310,820	62,806	2.7	(78,532)	(3.3)
Այդ թվում՝ կանոնադրական կապիտալ	1,371,156	1,371,156	1,371,156	-	-	-	-
Տարվա շահույթ	324,908	276,772	150,434	(48,136)	(14.8)	(126,338)	(45.6)
Տոկոսային եկամուտներ	3,224,260	3,023,048	3,094,606	(201,212)	(6.2)	71,558	2.4
Տոկոսային ծախսեր	(1,179,661)	(1,154,269)	(1,300,284)	25,392	2.2	(146,015)	(12.6)

ՍԵՖ-ի կողմից տրամադրված վարկերի ու փոխատվությունների 2017-2019 թթ. վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է գծապատկեր 1-ում:



Գծապատկեր 1

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից 2017-2019թթ. տրամադրված վարկերը և փոխատվություններն ըստ տնտեսության տարբեր ճյուղերի (հազ. դրամ)[1]

Հետազոտությունները վկայում են, որ ըստ տրամադրված վարկերի մեծ ծավալի՝ աճ է գրանցվել հիմնականում տնտեսության այլ ճյուղերում: 2017թ. Համեմատությամբ 2018թ.-ին վարկերի քանակն աճել է 9.1%-ով, իսկ 2018թ. համեմատությամբ 2019թ.-ին՝ 25.4%-ով: Թեև գյուղատնտեսության ճյուղը մնացած ճյուղերի համեմատ ունի բավականին բարձր ցուցանիշներ, սակայն 2017-2019թթ. այդ ցուցանիշները նվազել են 4.1%-ով: Տնտեսության մնացած ճյուղերում նույնպես աճ է գրանցվել:

Ներկայացնենք ՍԵՖ-ի կողմից 2017-2019թթ. տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների թվի (գծապատկեր 2):

[1]«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2017-2019 թթ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

Գծապատկեր 2

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից 2017-2019թթ. տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների թվի (հազ. դրամ)[1]

2017թ. իրավաբանական անձանց (փոքր ընկերություններ և անհատ ձեռներեցներ) տրված վարկերը և փոխատվությունները կազմել են 1,365,793 մլն դրամ: Այս ցուցանիշը 2018թ.-ին 2017թ.-ի համեմատությամբ աճել է 9.8%-ով, իսկ 2019թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ աճել է 18.3%-ով:

2017-2019թթ.-ին կազմակերպության կողմից ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի վերաբերյալ տվյալները ներկայացված են գծապատկեր 3-ում:



	Գյուղ. վարկեր	Այլ սպառողական վարեր	Սպառող. ապրանքների ձեռք բերման ֆինանսավորում	Բիզնես սկելու համար	Վերանորոգման վարկեր
2015	5 356 490	2 156 477	1 516 277	537 542	228 629
2016	4 911 071	3 164 571	975 840	467 535	236 843
2017	5 135 775	3 773 530	1 150 719	871 819	279 535

Գծապատկեր 3

«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից Ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր (հազ. դրամ)[2]

[1]«ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2017-2019 թթ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

[2]«ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2017-2019թթ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

Վերլուծությունները վկայում են, որ 2018թ.-ին 2017թ.-ի համեմատությամբ **գյուղատնտեսական վարկերը** նվազել են 8.3%-ով, սակայն 2017թ.ին նախորդ տարվա համեմատությամբ աճել են 4.5%-ով: Նշենք, որ զգալի աճ է գրանցվել **այլ սպառողական վարկերի գծով**, ընդ որում՝ 2018թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ այն աճել է 46.7%-ով, իսկ 2019թ.-ին 2018թ.-ի համեմատությամբ՝ 19.2%-ով: Աճ է նկատվում նաև կազմակերպության կողմից տրամադրվող **բիզնես վարկերի** մասով. 2017-2019թթ.-ին բիզնես վարկերի թիվն աճել է 62.2%-ով:

2019թ.-ին 2018թ.-ի համեմատությամբ աճել է նաև **սպառողական ապրանքների ձեռքբերման** նպատակով տրամադրվող վարկերի թիվը: 2018թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ վարկերը նվազել են 35.6%-ով, սակայն 2019թ.-ին գրանցվել է 17.9%-ով աճ: 2017-2019 թթ.-ին գրանցվել է նաև **վերանորոգման վարկերի** թվի 22.2% աճ:

Հարկ է նշել, որ վերջին տարիներին բանկերի, վարկային կազմակերպությունների միջև մրցակցությունը ստիպել է վերանայել տրամադրվող ծառայությունների «տեսականին» և որակը, արժեթղթերի կառավարման գործընթացը, երաշխիքների տրամադրումը և այլն: Վերջին տասնամյակներում փոխվել են նաև ֆինանսական հաստատությունների կառուցվածքը և կառավարման սկզբունքները: Ներկայումս հաճախորդները հակված են տեխնոլոգիական փոփոխությունների ներառմամբ, լավագույն սպասարկմամբ, բարեհաճ վերաբերմունքով ուղեկցվող հարաբերությունների, իսկ տեխնոլոգիական առաջընթացը կարող է օգնել հարաբերությունների բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

ՍԵՖ-ի կողմից տրամադրվում են տարաբնույթ վարկատեսակներ, և վերջին շրջանում բարելավվել են դրանց տրամադրման պայմանները, սակայն անհրաժեշտություն է առաջանում միջոցներ ձեռնարկել նաև վարկերի մարման ժամկետների երկարաձգման ուղղությամբ: Հատկապես խոշոր վարկերի դեպքում, ունենալով մատչելի տոկոսադրույք, սակայն մարման կարճ ժամկետ, հաճախորդները նախընտրում են օգտվել այն բանկերի ծառայություններից, որոնք առաջարկում են բարձր տոկոսադրույք, բայց մարման երկար ժամկետայնություն:

Կարևորվում է նաև երիտասարդներին բնակարան տրամադրելու հիփոթեքային վարկատեսակի ավելացումը: Նշենք, որ ներկայումս գործում է «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» ծրագիր, որի նպատակն է՝ պետական աջակցություն ցուցաբերել բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին:

Հաշվի առնելով առանց կանխավճարի հիփոթեքային վարկերի նկատմամբ բնակչության մեծ պահանջարկը՝ Կազմակերպությունը կարող է ավելացնել այս վարկատեսակը՝ հնարավորինս նվազեցնելով վճարվող կանխավճարի չափը: Կազմա-

կերպությունը կարող է հայտարարել նաև հատուկ ակցիա, որի շրջանակում կարելի է ձեռք բերել բնակարաններ: Բնակչության պահանջմունքների ուսումնասիրության նպատակով ՍԵՖ-ի կողմից պարբերաբար իրականացվում են շուկայի հետազոտություններ, որոնց արդյունքում բանկում մշակվում են համապատասխան գործիքներ: Նշենք, որ առանց կանխավճարի տրամադրումը հիփոթեքային վարկերն առավել մատչելի է դարձնում բնակչության այն զանգվածի համար, որն ունի կայուն եկամուտ, սակայն բավարար խնայողություններ չունի բնակարան ձեռք բերելիս կանխավճար կատարելու համար:

Փաստենք, որ կազմակերպության կողմից տրամադրվող սպառողական վարկերը տրվում են երաշխավորությամբ, ոսկու, անշարժ, շարժական գույքի գրավով: Սակայն հաշվի առնելով սպառողական վարկի նկատմամբ բնակչության ունեցած մեծ պահանջարկը՝ անհրաժեշտ է, որ այս վարկատեսակը տրամադրվի վճարվելիք տոկոսները և մայր գումարը վարկի մարման ժամկետի վերջում վճարելու պայմանով: Վերոնշյալ պայմաններից բացի, ցանկալի է, որ վարկի տրամադրման բավարար պայման լինի միայն անձնագրի և սոցիալական քարտի առկայությունը, մինչդեռ այն տրամադրվում է միայն «հավատարիմ» հաճախորդներին և կրում է ժամանակավոր բնույթ:

Հարկ է նշել, որ ի տարբերություն բանկերի՝ վարկային կազմակերպությունների համար ստեղծվում են անհավասար պայմաններ, և ոլորտում առկա են մի շարք խնդիրներ, որոնք պահանջում են նոր լուծումներ: Այս առումով անհրաժեշտ է վարկային կազմակերպությունների ու բանկերի համար ստեղծել հավասար պայմաններ:

Այսպիսով՝ «ՍԵՖ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ում, դիտարկելով կազմակերպության կողմից կատարվող ինվեստիցիաների հետ կապված ռիսկերը, կարևորվում է վարկային ռիսկի ճիշտ կառավարումը, քանի որ վարկավորումն ակտիվների պորտֆելի ձևավորման գործում ունի առաջատար դեր, և այն առկա է բանկի, վարկային կազմակերպության տնօրինած հաշվեկշռային բոլոր ակտիվներով և արտահաշվեկշռային միջոցներով կատարվող գործառնություններում: ՍԵՖ-ն իր վարկային ռազմավարությունը մշակելիս պետք է ուշադրություն դարձնի դրամական միջոցների ներգրավման խնդրին, քանի որ ներգրավված միջոցների արդյունավետ օգտագործումը կազմակերպությանը կապահովի մեծ չափով տոկոսային եկամուտով:

Օգտագործված գրականություն

I. ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ կանոնադրություն:
2. «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2017 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:
3. «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2018 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:
4. «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ 2019 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ:

II. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաղանյան Լ. Հ., «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», Երևան, 2010:
2. Ասատրյան Բ., «Բանկային գործ», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004:

III. ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

1. http://sefmicro.org - «ՍԵՖ ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ պաշտոնական կայքէջ:

OPPORTUNITIES FOR IMPROVING CREDIT CONDITIONS BY "SEF INTERNATIONAL UCO" LLC

HERGNYAN MARIAM
Candidate of Economics, Associate Professor,
Vice Dean of the Faculty of Economics, GSU
MNEYAN SYUZANNA
Graduate of Faculty of Economics,
Department of Finance, GSU

The article is dedicated to identifying ways to improve the terms of loans provided by "SEF International UCO" LLC.

In a market economy, the Armenian economy cannot develop without stable, well-developed financial institutions, particularly the credit system, the development and improvement of which require a review of existing lending conditions.

Definitely, the primary precondition in the financial market is the issue of attracting funds by credit organizations to regulate their placement, which is conditioned by a clearly predetermined strategy of asset-liability management.

"SEF International Universal Credit Organization" LLC is considered one of the players in the financial system of the Republic of Armenia, it has a special place in that system. The development of the credit system and its full implementation in countries with transition economies is associated with a number of problems and limitations. The Armenian economy cannot develop without a stable credit system, so it is necessary to review and improve the terms of loans.

The paper presents the financial indicators of "SEF International UCO" LLC for 2017-2019, analyzed the loans provided by SEF according to customers from different sectors of the economy, suggested ways to improve the terms of loans.

Keywords: *credit system, universal credit organization, financial stability, borrower, lender, guaranteed loans, loan terms, credit risk.*

ВОЗМОЖНОСТИ УЛУЧШЕНИЯ УСЛОВИЙ КРЕДИТОВАНИЯ, ПРЕДОСТАВЛЯЕМЫХ ООО "СЕФ ИНТЕРНЕЙШНЛ УКО"

ЕРГНЯН МАРИАМ
Кандидат экономических наук, доцент,
Замдекана экономического факультета ГГУ
МНЕЯН СЮЗАННА
Выпускница отделения "Финансы" экономического факультета ГГУ

Статья посвящена выявлению путей улучшения условий предоставления кредитов ООО "Сеф Интернейшнл УКО".

В условиях рыночной экономики, экономика РА не может развиваться без стабильных, развитых финансовых институтов, в частности, кредитной системы, развитие и совершенствование которой требуют пересмотра существующих условий кредитования. Безусловно, первоочередным предусловием на финансовом рынке является проблема привлечения средств кредитными организациями и регулирование их распределения, что обусловлено четко определенной стратегией управления активами и пассивами. ООО "Сеф Интернейшнл универсальная кредитная организация" считается одним из ролевых в финансовой системе Республики Армении и занимает свое особое место в этой системе. Формирование и полноценная реализация кредитной системы в странах с переходной экономикой связаны с рядом проблем и ограничений. Экономика Армении не может развиваться без стабильной кредитной системы, поэтому необходимо пересмотреть и улучшить условия кредитования:

В работе представлены финансовые показатели ООО "Сеф Интернейшнл УКО" за 2017-2019 годы, проведен анализ кредитов и займов, по разным отраслям экономики и клиентам, предоставляемых "Сеф Интернейшнл", предложены пути улучшения условий кредитования.

Ключевые слова: *кредитная система, универсальная кредитная организация, финансовая стабильность, кредитор, заемщик,, кредиты под поручительство, условия кредитования, кредитный риск.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.08.2020թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.10.2020թ.: